

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱԿԱՐ-
ԺԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌՅԽԵՒ Լ. ՏԱՐԻ

Հ Ա Մ Ա Ր Ա Թ Ա Ջ Ի Ե


ՅՈՒՆՈՒԱՐ 1897 Թ.

Մ Կ Ր Տ Ի 2 ԺԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆՆԵԼԻ ԿԱՄՐՔԻՆ
ԱՍՏՈՒԹՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՅԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԱՄՆԻ. ՄԻԱԲԱՆԵ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅՍ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻ ՍՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԵՐ
ՍՈՒՔԻՆՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՂՋՈՒՆԵՒ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՏ ԱՌՆԵՄՔ.

Կոնդակաւ Մերոյի որ յ19 դեկտեմբերի
1894 ամի համարաւ 2168, կարգեալ էաք
զյանձնաժողով խմբագրութեան Արարատ ամ-
սագրոյ Մայր Աթոռոյս: Եօրէ անտի և ցայ-
սօր ժամանակի անդամք յանձնաժողովոյ ջա-
նասիրութեամբ վարեալ զգործս, մեծապէս
բարեզեղեալ ընդարձակեցին զծաւալ և զպար-
ունակութիւն վերձանելի նիւթոյ յէջս Ա-
րարատի որոյ վասն և արժանի իսկ են Մե-
րումն Հայրապետական գոհունակութեան: Ապա
հայեցեալ ի ծանրութիւն աշխատանաց, զորս

կրեն բարեջան անդամք յանձնաժողովոյն որք
ընդ նմին վարեն և զպաշտօն ուսուցչութեան
ճեմարանի Մայր Աթոռոյս, ևս և կամելով
Մեր՝ յառաւել բարգաւաճումն Արարատ ամ-
սագրոյ, կոչել ի գործակցութիւն և զայնօրիկ
ի միարանից Մայր Աթոռոյ, որք հմուտութեամբ
իւրեանց և կարեորութեամբ պաշտամանցն,
զորս իւրաքանչիւր ոք ի նոցանէ յանձին ու-
նի կարեն մեծապէս սատարել յառաջադի-
մութեան կրօնական և պաշտօնական ամնա-
գրոյ Մերոյ, այսու Հայրապետական կոնդա-

810-54



կաւս արժան վարկաք վտահացեալ ի բարձր
 խոհականութիւն Չեր և ի հաւատարմութիւն
 առ Մայր Աթոռս կարգել զգերապատուու-
 թիւն Չեր նախագահ խմբագրական յանձնա-
 ժողովոյ Արարատի և պատուիրել Չեղ՝ փութալ
 անյապաղ հրաւիրել յանդամակցութիւն խմբ-
 րագրական յանձնաժողովոյ և ի գործակցու-
 թիւն Չեր առաջին՝ զգիւանապետն Մեր՝
 զարժանապատիւ Նահապետ վարդապետն Նա-
 հապետեանն երկրորդ՝ զանդամն Սինօզի՝ զար-
 ժանապատիւ Վահան վարդապետն Տէր Գրի-
 գորեանց, երրորդ՝ զուսուցիչն հոգեւոր Ճեմա-
 րանի՝ զարժանապատիւ կարապետ վարդապետն
 Տէր Մկրտչեանց, չորրորդ՝ զՄատենադարանա-
 պետն Մայր Աթոռոյս՝ զարժանապատիւ Սա-
 հակ վարդապետն Ամատունի, հինգերորդ՝
 զանդամն Տպարանական ժողովոյ՝ զպարոն
 Նիկողայոսն Զարամեան և վեցերորդ՝ զան-
 դամն ուսումնարանական յանձնաժողովոյ՝ ըզ-
 պարոն Յովհաննէս Յովհաննիսեանց, որոց ա-
 մենեցուն ի վերայ դնի պաշտօն միահամուռ
 խորհրդակցութեան ընդ նախագահութեամբ
 Գերապատուութեանդ առ ի բարւոքել զվի-
 ճակ Արարատի, առաջնորդ ունելով զայսօսիկ
 հրահանգս Մեր, Առաջին՝ պատուիրեմք յանձ-
 նաժողովոյդ, անփոփոխ պահելով զվաղեմի ծրու-
 գիր Արարատի, ջան ի գործ դնել առաւե-
 լապէս ընդարձակելոյ և ճոխացուցանելոյ զայ-
 նօսիկ նիւթս ընթերցանութեան յէջս ամսա-
 գրոյն, որք արձարծեն ի միտս ընթերցողաց՝
 աշխարհականաց և եկեղեցականաց, զսէր առ
 ուսումն ս. Աւետարանի և այլոց կրօնական
 գիտելեաց, կարեւորաց առ բարեպաշտական
 կեանս հօտին Զրիտոսի, միտ դնելով հանա-
 պաղ յատակութեան ոճոյ և մեկին խմաստից
 մէն մի դրուածոցն՝ հրատարակելոց յէջս Ա-
 րարատի, այլ և փոյթ ունիլ յաւելլոյ ի պէտս
 գիւղական քահանայից, ուսուցչաց և այլոց
 եկեղեցական պաշտօնէից և հաստատութեանց
 զդիւրամատչելի նիւթս ընթերցանութեան
 քաղեալս ի տնտեսական կենցաղօգուտ գի-
 տութեանց և յառողջապահութեան: Երկրորդ՝
 յիւրաքանչիւրումն եօթնեկի միանգամ դու-
 մարեցի խմբագրական յանձնաժողովն ի վա-
 րել զամենայն գործս խմբագրութեան Արա-
 րատի ըստ հրահանգաց մերոց՝ ծանուցելոց

ընդ ձեռն նախագահի: Երրորդ՝ առարկայք
 պարապմանց յանձնաժողովոյդ են Ա. ընթեռ-
 նուլ և յեա անաչառ քննութեան արձակել
 վասն տպագրելոյ յէջս Արարատի զինքնուրոյն
 կամ զթարգմանեալ երկս՝ մատուցեալս յա-
 նուն խմբագրական յանձնաժողովոյ, Բ. հայ-
 թայթել հնարս բարւոքելոյ զբաշխումն նիւ-
 թոց, հրաւիրելոյ և քաջալերելոյ զնորանոր
 աշխատակիցս՝ առաւելապէս յեկեղեցականացն
 դասու և ընտրելոյ զնորանոր նիւթս հետա-
 քրքրականս ի ձեռագիր մատենից Մայր Աթո-
 ռոյ կամ ի Դիւանաց Հայրապետանոցի և
 Սինօզի Գ. կազմել զբաժին պաշտօնական լրոց
 և տեղեկութեանց՝ արժանի համարելոց հրա-
 տարակութեան, միտ դնելով հանապաղ զգու-
 շալի խմբագրութեան նոցին առ ի շինել և եթ
 զմիտս հասարակաց, Եւ Գ. խմբագրել զամբողջ
 կազմութիւն նիւթոց անտրակի իւրաքանչիւր
 ամսոյ և յանձնել զայն ի տպագրութիւն ընդ
 ձեռն Տեսչի տպարանի, թողով ի վերայ տպա-
 րանական վարչութեան զպատասխանատուու-
 թիւնն ածելոյ ի տիպ և առաքելոյ ի ժամա-
 նակին տարժանորդան զթերթս ամսագրոյն:

Ձայսօսիկ հրահանգս անանդեալ յառաջ-
 նորդութիւն Գերապատուութեան Չերոյ և
 յանձնաժողովոյդ, ընդ նմին պատուիրեմք տպա-
 րանական վարչութեան Մայր Աթոռոյ ի խրա-
 խոյս մշտական աշխատակցաց Արարատ ամսա-
 գրոյ՝ եկեղեցականաց և աշխարհականաց, տալ
 ի դնոց բաժանորդութեան Արարատի տարե-
 կան բուրլիս վեց հարիւր ի բաշխումն վարձա-
 արութեան այնոցիկ՝ որք ոչ յօժարիցին ձրիա-
 բար տալ զոր և է աշխատութիւն իւրեանց
 ի հրատարակութիւն յէջս Արարատի և կամ
 այնպիսեաց, որոց արժան համարիցի խմբա-
 գրական յանձնաժողովն:

Ծանձնարարեալ բազմափորձ հմտութեան
 Գերապատուութեանդ և աշալուրջ հոգատա-
 րութեան անդամոց յանձնաժողովոյդ՝ հոգե-
 ծին զաւակաց մերոց, զխմբագրութիւն Արա-
 րատ ամսագրոյ, որ բերանն է միաբանութեան
 Մայր Աթոռոյ և պաշտօնական թերթ Հայ-
 րապետութեան ամենայն Հայոց, յուսալ յու-
 սամբք, զի ամենազօր Հոգին Աստուած և
 աղբիւրն շնորհաց զօրացուցէ զՉեղ՝ իմաս-
 տութեամբ և սիրով լրուցանել զակնկալու-

Թիւն մեր և զհամայն հօտին մերոյ՝ մեծապէս կարօտելոց ժամանակիս յայսմիկ կենդանի քարոզութեան բանին կենաց և ուղիղ առաջնորդութեան մտաց ամենեցուն ի շաւիղս անդ ճշմարիտ վարդապետութեան ըստ աւանդութեան ս. Առաքելական եկեղեցւոյս մերոյ: Վասնորոյ և հայրական սիրով յորդոր կարգամբ կամակար յօժարութեամբ փոյթ ունել ամենեցուն Չեր վառելոյ զսիրտ հաւատացելոց ի սէր խաչեցելոյն վասն Մեր շինելով զմիտս գայթակղելոցն և սարտուցելոցն ի զրկաց

մեծագորով Մօրն մերոյ Ղուսոյ և Չամբելով ամենեցուն առհասարակ զկաթն ի մաքուր ստեանց նորին ի փառս Փրկչին մերոյ և ի պարծանս սուրբ եկեղեցւոյ: Այսու Չերմոզին ակնկալութեամբ օրհնեմք զՉեղ և զորս ընդ Չեղզ ևն զործակիցք և մնամք աղօթարար:

Ի վերայ իսկականն ստորագրեալ է

Մ Կ Ր Տ Ի Չ

ԿՈՒՅՈՒՆԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ, ՀԱՅՈՑ.

Յիւ 1867

յ 51 դեկտեմբերի 1896 ամի եւն.

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն — Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ի

Ե Ի

ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՂԸ.

„Յերսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան, իսկ որք ընկալան զնա, ետ նորա իշխանութիւն որդիս Աստուծո: Իննն, որոց նաւասացն յանուն նորա:“

Յող. Ա. 11, 12:

Դու զայիս ես կրկին, Յիսուս, իմ Փրկիչ... զայիս ես ինչպէս ձմրան սրղ օդի մէջ իջնող կենդանարար Չերմութիւնը, անձկալից լուութեան մէջ հնչող քաղցրաձայն մեղեդին. ինչպէս միտիթարիչ մի հրեշտակ՝ սգաւոր ընտանիքի համար, կարմիր արշալոյս՝ այս խաւարչտին աշխարհի համար... զայիս բարձրանում ես մեր տագնապալից կեանքի հօրիզոնի վերայ՝ խաղաղութիւն ու հաճութիւն սփռում, իջնում ես մեղաւոր մարդկութեան զիրկը՝ կենդանութիւն ու յոյս ներշնչում...:

Օտարների մօտ չես զայիս... Ըն յաղթութեան նշանը փայլում է այսօր մեր խեղճ երկրագնաի բոլոր կողմերում: Հազար ու բիւր զանգակների մեղմ զօղանջիւնը Ըն հրաշալի զալուսար մեղ աւետում... Բայց արդեօք նոյնչափ բազմաթիւ են փառաբանական երգով Ըեղ ընդառաջողները, կենդանի հաւատոյ բոլոր Չերմութեամբ Ըեղ ընդունողները... Ահա մէկը Ըն անուան երկրպագու աշխարհի

ամենամեծ կենդաններից՝ ամենախաբիթամ մի մայրաքաղաք. խայտաճամուկ բազմութիւնը խոնուում է փողոցներում և հրապարակների վերայ՝ այսօր ևս ինչպէս ամեն օր. գալիս անցնում են մտահոգ մարդիկ՝ կռիւ մղելով անազորոյն բազդի դէմ: Նուաձել Չանալով աշխարհն իրենց անյաղ ցանկութիւնների համար. անցնում են և անհոգ մարդիկ՝ վայելք ու զուարճութիւն որոնելով, անաշխատ զուարճութիւն՝ միշտ նոր և աւելի: Իսկ Ըեղ որոնողներ, Ըեղ համար կռուողներ— ո՛ր են նոքա, քանիսի՞ մաքոյն է արդեօք անցնում, թէ այսօր աշխարհ իջար Դու՝ մի նոր և սուրբ կեանքի, իսկական երանաւետ երջանկութեան ճանապարհը ցոյց տալու՝ վսեմ ու անպղտոր մի ուրախութեան նուէրներ բերելու...: Մակայն այն՝ շուայտութեան ու փոթորկոտ կրքերի այդ ծովի մէջ ևս կան կղզիներ, ուր հաւատոյ անշէջ կանթեղը վառուում է Ըն աննման պատկերի առաջ, ուր խաղաղութեան ու զգաստութեան զրկում ծաղկում են անարատ կեանքի ծաղիկներ: Եւ ո՛ր չեն զանուում այդպիսի կղզիներ. այնտեղ, հեռու հիւսիսում կամ բարձր լեւրան լանջի վերայ, ձեան ահագին շեղջակոյաները ձեղքելով ճանապարհ են բաց անում դէպի Ըն անշուք մատրան դուռ. այստեղ, անապատի կիզիչ աւազը ոտաբորիկ կոխելով՝ ժողովուում են մի արմաւենու շուրջ, որի վերայ նկարուած է Ըն յաղթութեան պարզ նշանը. անմահական լուսոյ այն մաքուր շո՛ւ